

4675



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
պարտականությունները կատարող  
Արամ Մեյմարյան

«26» 05 2026 թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 067 - 26

Նախաձեռնող՝

«Ա2-Վա» ՍՊԸ

Ք. Երևան, Մալաթիա-Սերաստիա Բ 2 թղմ., 89 շ.

Գործունեությունը՝

Տուֆի հանքավայրի «Ա2-Վա» փեղամասի արդյունահանում  
Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Մաստարա բնակավայր

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 067 - 26

« 26 » 05 2026թ.

**Արագածոտնի մարզի Մաստարայի տուֆերի հանքավայրի «Ա2-Վա» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	«Ա2-Վա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Մաստարա բնակավայր

**Ներածական մաս.** Մաստարայի տուֆերի հանքավայրի «ԱՇ-ՎԱ» տեղամասը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրի տարածքում՝ բնակելի գոտուց մոտ 1 կմ հյուսիս-արևելք:

Հայցվող տարածքը հանդիսանում է գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, հողատեսքը՝ ընդերքօգտագործման, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Մաստարայի տուֆերի հանքավայրի «Ա2-Վա» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Մաստարա բնակավայրում՝ գյուղատնտեսական նպատակներով անօգտագործելի տարածքում:

Հայցվող տեղամասին հարակից՝ 600մ հեռավորության վրա գտնվում է Մաստարայի տուֆերի հանքավայրի Հայք տեղամասը, որն ունի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունք:

Համաձայն հաշվետվության բուն՝ տեղամասի տարածքում այլ օբյեկտներ առկա չեն, բուսականությունն աղքատ է, մակերևույթային և ստորգետնյա ջրերը բացակայում են: Հայցվող տարածքում լցակույտեր և ենթակառուցվածքներ չկան: Հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ նույնպես առկա չէ:

Լեռնագրական տեսակետից տեղամասի տարածքը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի հարավային լանջերին և տեղակայված է 1855-1870 մ բացարձակ բարձրությունների վրա:

Տարածքի կլիմայական շրջանը ցուրտ է՝ զով, քամոտ ու օպտիմալ խոնավությամբ ամառով և շատ ցուրտ, քամոտ ու խոնավ ձմեռով: Մթնոլորտային տեղումների տարեկան

միջին քանակը չի անցնում 434 մմ-ից, տարեկան միջին խոնավությունը 66% է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +37.5°C, իսկ նվազագույնը՝ -26.1°C:

Գետային ցանցը նույնպես թույլ է զարգացած և ներկայացված է սեզոնային բնույթի սելավային հոսքերի հեղեղատներով: Տեղամասի շրջանը գործնականում ջրազուրկ է, աղքատ աղբյուրներով: Հիմնական ջրագրական միավորը Սելավ-Մաստարան է:

Հանքավայրի տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝  $a = 0.3g$ :

Մաստարայի տուֆերի հանքավայրի «ԱՇ-ՎԱ» տեղամասի տարածքում արտածին երկրաբանական երևույթների, սողանքների և առավել վտանգավոր սողանքային մարմիններ չկան:

Տեղամասը բնութագրվում է բլրաալիքավոր ռելիեֆով, մակերևույթը խիստ քարքարոտ է: Մակերևութային գերակշռող թեքությունը կազմում է 4°:

Հետախուզված տեղամասը գրեթե հարթ է, հյուսիսից և հյուսիսարևելքից սահմանափակված ոչ խորը ձորակներով, իսկ հարավից և արևմուտքից ոչ բարձր բլուրներով:

Տեղամասի տուֆերը ներկայացված են խայտաբղետ գույների ապարներով (հիմնականում՝ կարմիր, շագանակագույն և բաց վարդագույն): Մի գույնից մյուսին անցումն աստիճանաբար է: Դրանք թույլ ճեղքավոր, ծակոտկեն, համեմատաբար ծանր են:

Տեղամասի տուֆերն ունեն մեծ մակերեսային տարածում: Դրանց հզորությունը հիմնականում տատանվում է 15-20.8 մ սահմաններում:

Համաձայն հաշվետվության՝ Մաստարայի տուֆերի հանքավայրի «ԱՇ-ՎԱ» տեղամասի հետախուզման ընթացքում մասնագիտացված հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ չեն կատարվել: Դիտարկումներով պարզվել է՝ ստորերկրյա ջրերի բացակայությունը հորատանցքերում և շրջակայքում:

Ստորերկրյա ջրերի բացակայությունը պայմանավորված է տեղամասի տարածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Տեղամասի տուֆերը աչքի են ընկնում իրենց բարձր ջրաթափանցելիությամբ:

«ԱՇ-ՎԱ» տեղամասի տուֆերի հանքավայրի շահագործումը կարելի է իրականացնել բարենպաստ ջրաերկրաբանական պայմաններում: Հետախուզված տեղամասի տուֆերի հաստվածքը, ինչպես նաև մերձակայքը գործնականում ջրազուրկ են, ստորերկրյա ջրերի հորիզոններ և ելքեր (աղբյուրներ) հայտնաբերված չեն: Գրունտային ջրերը ջրատար հորիզոններ չեն առաջացնում, որը կնպաստի շահագործման աշխատանքների անվտանգ իրականացմանը:

Բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով՝ ներծծվելով ճեղքերի միջով:

Բուսական աշխարհը ներկայացված է կիսաանապատային բուսատեսակներով: Կենդանական աշխարհը գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով է: Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն դիտարկվել: Հանքավայրի հեռավորությունն «Արագածի ալպյան» արգելավայրից կազմում է ավելի քան 23 կմ:

Արագածոտնի մարզի Մաստարայի տուֆերի հանքավայրի «ԱՇ-ՎԱ» տեղամասի 5.73 հա մակերեսի (հաստատված պաշարների տարածք) վրա, 01.01.2023 թ. դրությամբ հաշվարկվել են 879.45 հազ.մ<sup>3</sup> ընդհանուր քանակությամբ շինարարական քարի արտադրության համար պիտանի տուֆերի հաշվեկշռային պաշարներ, գնահատված A+B կարգերով: Օգտակար հանածոյի միջին հզորությունը հետախուզման սահմաններում կազմել է 10.24 մ, արտարկման հետ միասին՝ 15.36 մ: Օգտակար հանքավածքը ծածկող

ապարների ծավալը կազմում է 15.46 հազ.մ<sup>3</sup>: Օգտակար հաստվածքը ծածկող ապարների միջին հզորությունը 0.27 մ է: Հայցվող տարածքը 5.34 հա է:

Հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատները ներկայացված են ARM WGS 84-ով:

Կետերի համարները	X	Y	Կետերի համարները	X	Y
1	4481154.4000	8406416.8000	8	4481115.5220	8406560.9818
2	4481299.4000	8406366.1000	9	4481111.0597	8406542.2936
3	4481361.1000	8406484.8000	10	4481109.2067	8406528.3174
4	4481332.7000	8406611.4000	11	4481107.3990	8406514.4671
5	4481214.7653	8406678.8875	12	4481106.2122	8406502.3377
6	4481143.1533	8406583.4027	13	4481104.6446	8406488.4158
7	4481139.7987	8406581.0992	14	4481102.1295	8406472.1208

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և փոքր խորության վրա տեղադրված լինելուց՝ հանքավայրի մշակումը նախատեսվում է իրականացնել բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- բացահանքի առավելագույն երկարությունը մակերևույթում՝ մոտ 324 մ,
- բացահանքի առավելագույն լայնությունը մակերևույթում՝ մոտ 264 մ,
- մշակվող տուֆերի հաստաշերտի միջին հզորությունը՝ 7.7 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ մոտ 20.1 մ,
- բացահանքի նվազագույն խորությունը՝ մոտ 13.5 մ,
- բացահանքի համար օտարման ենթակա մակերեսը՝ 5.34 հա,
- հանքաստիճանի բարձրությունը բացահանքի վերջնական դիրքում՝ 0.42 մ,
- հանքաստիճանի թեքությունը՝ 90°,
- անվտանգության բերմայի լայնությունը՝ 0.6-0.8 մ,
- բացահանքի կողի առավելագույն թեքությունը՝ 28°:
- օտարման մակերեսը՝ 5.34 հա:

Համաձայն նախագծի՝ բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվել է՝

- աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 305 օր,
- շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 6 օր,
- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ,
- հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ:

Բացահանքի տարեկան մարվող պաշարները «ԱՇ-ՎԱ» տեղամասում կազմում են 879.5 հազ. մ<sup>3</sup>, այդ թվում A կարգով՝ 586.3 հազ. մ<sup>3</sup> և B կարգով՝ 293.2 հազ. մ<sup>3</sup>: Կորզվող պաշարները՝ 677.6 հազ. մ<sup>3</sup>, տարեկան արտադրողականությունն ըստ մարվող պաշարների՝ 44.0 հազ. մ<sup>3</sup>, իսկ օգտակար հանածոյի կորզման գործակիցը՝ 0.77:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն, ըստ մակաբացման ապարների, կկազմի 722 մ<sup>3</sup>:

Բացահանքի ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Համաձայն նախագծի՝ «ԱՇ-ՎԱ» տեղամասի մշակումը նախատեսվում է սկսել տեղամասի արևելյան մասի բարձրադիր տեղանքից դեպի հյուսիս արևմուտք:

Բացահանքային դաշտի բացումը նախատեսվում է իրականացնել 1872.3-1857.6 մ նիշ ունեցող հորիզոններից՝ կիսախրամներով, իսկ 1857.18-1845.0 մ նիշ ունեցողները՝ ներքին խրամներով:

Տեղամասի արևելյան մասում առկա ավտոճանապարհից (այն միանում է Մաստարա-Ձորագյուղ գյուղերը կապող ճանապարհին) դեպի հարավ, բացահանքի եզրագծով անցկացվելու է հավաքող ավտոճանապարհ: Նշված ավտոճանապարհից դեպի



տեղամասի նախատեսվող աշխատանքային հորիզոններ անցկացվելու են մուտքային ճանապարհներ: Ճանապարհը բացահանքի եզրագծով նախատեսվում է անցկացնել մինչև տեղամասի հարավ-արևմտյան մասը, որտեղից էլ ներքին խրամի միջոցով մուտք կապահովվի 1857.18-1845.0 մ նիշ ունեցող հորիզոնները, իսկ այդ ճանապարհի շարունակությունը դեպի տեղամասի եզրագծով արևմտյան ուղղությամբ՝ կապահովվի կապը լցակույտի հետ:

1872.3-1857.6 մ նիշ ունեցող հորիզոնները նախատեսվում է բացել հավաքող ավտոճանապարհից սկիզբ առնող մուտքային ճանապարհներից՝ կիսախրամների միջոցով, իսկ դրանից ներքև գտնվող հորիզոնների բացումը՝ ներքին խրամի միջոցով:

Բացող և կտրող կիսախրամների կամ խրամների անցման ժամանակ հատված քարերի հեռացումը, բարձումը տրանսպորտային միջոցներ՝ աշխատանքի փոքր ծավալի պատճառով, նախատեսվում է կատարել ձեռքով:

Տեղամասում լեռնակապիտալ աշխատանքներն ընդգրկում են՝

- տեղամասի արևելյան մասում գործող ավտոճանապարհից դեպի հարավ ուղղությամբ մինչև արևմտյան մաս հավաքող ավտոճանապարհի անցկացում՝ մոտ 345 մ ընդհանուր երկարությամբ և 6 մ լայնությամբ,

- արտադրական հրապարակի ստեղծում՝ 320 մ<sup>2</sup>,

- մակաբացման ապարների հեռացում՝ 627 մ<sup>3</sup> ծավալով,

- օգտակար հանածոյի արդյունահանում՝ 695 մ<sup>3</sup> ծավալով:

Բացահանքի շինարարական շրջանում բացվելու և աշխատանքային վիճակի են բերվելու 1872.3-1871.88 մ հատակի բացարձակ նիշ ունեցող աստիճանները:

Բացահանքի շինարարական շրջանի ընթացքում նախատեսվում է կիրառել նույն սարքավորումները, ինչ-որ շահագործական աշխատանքների ժամանակ:

Հանույթային աշխատանքները նախատեսվում է կատարել ընդլայնական մեկկողանի, ցածրաստիճանային մշակման համակարգով՝ արտաքին ժամանակավոր լցակույտառաջացմամբ: Հանույթային աշխատանքները նախատեսվում է իրականացնել CMP -026/1 մակնիշի քարհատ մեքենայով: Հատքարի հանույթը տուֆային զանգվածից կատարվելու է երկու գործողությամբ. նախ անցկացվելու են լայնական ուղղաձիգ սղոցումներ աստիճանի աշխատանքային ճակատի ամբողջ երկայնքով՝ մուտքային խրամից մինչև ելքային խրամ, ապա իրականացվելու է հորիզոնական և ուղղաձիգ երկայնական սղոցումներ՝ անջատելով պատքարը զանգվածից:

Մաստարայի տուֆերի հանքավայրի «ԱՇ-ՎԱ» տեղամասում մակաբացման ապարները ներկայացված են հողային փխրուն-բեկորային դեյուվիալ առաջացումներով: Օգտակար հաստվածքը ծածկող ապարների միջին հզորությունը կազմում է 0.27 մ:

Դեյուվիալ առաջացումների հեռացումը նախատեսվում է իրականացնել T-170 մակնիշի բուլդոզերով: Մակաբացման ապարների տարեկան ծավալը կազմում է 0.72 հազ մ<sup>3</sup>, իսկ հերթափոխայինը՝ 2.4 մ<sup>3</sup>:

T-170 մակնիշի բուլդոզերը նախատեսվում է օգտագործել նաև ուղիղ կտրվածքի պատքարին չբավարարող տուֆերի և տուֆերի ջարդքարի հեռացման ու աշխատանքային հրապարակում կուտակման համար, որոնց տարեկան ծավալը կազմում է 20.4 հազ. մ<sup>3</sup>, իսկ հերթափոխայինը՝ 66.8 մ<sup>3</sup>: Դրանք հետագայում բարձվելու են սպառողների տրանսպորտային միջոցներ և իրացվելու են:

«ԱՇ-ՎԱ» տեղամասի օգտակար հանածոյի պաշարների արդյունահանման ժամանակ մակաբացման ապարների ծավալը կազմում է 14443 մ<sup>3</sup>, որոնք ներկայացված են հողային փխրուն-բեկորային դեյուվիալ առաջացումներով: Մակաբացման ապարները տեղամասի շահագործման ամբողջ ընթացքում նախատեսվում է տեղավորել բացահանքի արևմտյան սահմանի ամբողջ երկայնքով՝ արտաքին ժամանակավոր լցակույտառանձնակիցմամբ:

Ժամանակավոր լցակույտն իր վերջնական դիրքում կունենա մեկ հարկ՝ 0-8 մ բարձրությամբ, ծավալը՝ ապարների 1.2 փխրեցման գործակցի հաշվառմամբ կկազմի 17332 մ<sup>3</sup>, իսկ զբաղեցրած մակերեսը կազմելու է մոտ 0.47 հա:

Մակաբացման ապարների տեղափոխումը մինչև ժամանակավոր արտաքին լցակույտ նախատեսվում է իրականացնել էքսկավատոր-բարձիչով: Դեյուվիալ առաջացումները T-170 մակնիշի բուլդոզերի միջոցով հեռացնելուց հետո, այնուհետև JCB 3CX էքսկավատոր բարձիչով տեղափոխվելու են ժամանակավոր արտաքին լցակույտ: Մակաբացման ապարների տեղափոխման հեռավորությունը մինչև արտաքին լցակույտ, բացահանքի մշակման տարբեր տարիներին, չի գերազանցելու 500 մ-ը: Լցակույտի ձևավորումը կատարվելու է բուլդոզերային եղանակով:

Շահագործման ավարտից հետո բացահանքի մշակված տարածություն տեղափոխված մակաբացման ապարները կհարթեցվեն և կկատարվի ցանքս: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիան կիրականացվի արդյունահանման աշխատանքների ավարտից հետո, որի ժամանակ նախատեսվում է արտաքին ժամանակավոր լցակույտից ապարները տեղափոխել բացահանքի մշակված տարածություն և փոել դրանք այնտեղ:

Հարթեցվելու է բացահանքի տարածքը՝ 55800 մ<sup>2</sup>, լցակույտի տարածքը՝ 4700 մ<sup>2</sup>, արտադրական հրապարակը՝ 320 մ<sup>2</sup>, մուտքային ավտոճանապարհը՝ 2070 մ<sup>2</sup>: Ռեկուլտիվացված տարածքի ընդհանուր մակերեսը կազմելու է 60820 մ<sup>2</sup>:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, ինչի շրջանակներում բացահանքի հատակի և լցակույտի վերին հարթակի տարածքում փոխված և հարթեցված ապարները պարարտացվելու են: Այնուհետև կատարվելու է տարածաշրջանի լանդշաֆտներին բնորոշ տեսակների սերմերի ցանք:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսված ծախսերի ամբողջ արժեքը կազմում է 1933.7 հազ. ՀՀ դրամ, կենսաբանական ռեկուլտիվացիայի ծախսը՝ 930.7 հազ. դրամ, տեխնիկական ռեկուլտիվացիան՝ 1003 հազ. ՀՀ դրամ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ընդերքօգտագործման թափոնները հանքի տարածքում ներկայացված են 1008 մ<sup>3</sup> ծավալով մակաբացման ապարներով:

Արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ զուգակցված են մի շարք այլ թափոնների առաջացում, որոնց կառավարման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներառված է հաշվետվությունում և թափոնների կառավարման պլանում:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները, փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Ջուրը բերվելու է ջրցան-վացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Փոշենստեցման մակերեսները կազմում են՝ բացահանքում աշխատանքային հրապարակը՝ 2500 մ<sup>2</sup>, լցակույտերի վրա՝ 4700 մ<sup>2</sup> և ավտոճանապարհների վրա՝ 2070 մ<sup>2</sup>, ընդամենը՝ 9270 մ<sup>2</sup>: Տարվա կտրվածքով շոգ և չոր օրերի քանակով պայմանավորված՝ փոշենստեցման նպատակով ջրի քանակը կազմում է 854 մ<sup>3</sup>/տարի:

Համաձայն հանքի փակման ծրագրի՝ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի նախատեսված համապատասխան, ընկերությունը կազմելու է հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կներառվեն բացահանքի, ենթակառուցվածքների, արտադրական տարածքի և



ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխազագեր, դիզելային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի, ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («Էկո ցենտր» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Համաձայն ՀՀՇՆ 31-04.01-2024 սանիտարական նորմերի, III դաս լեռնային ապարների հանքավայրերի համար սանիտարա-պաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է 300 մ, այսպիսով՝ նախատեսվող գործունեության համար ապահովված է սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:

Շահագործման ընթացքում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում:

- փոշենստեցման նպատակով լցակույտի, ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,

- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում՝ բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,

- մաշված անվադողերի, կապարե կուտակիչների հանձնում՝ լիցենզավորված մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,

- մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ, որպես սահմանային թույլատրելի խտություններն ընդունվելու են՝ ածխածնի օքսիդի համար՝ 5 մլգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2 մլգ/մ<sup>3</sup>, մրի համար՝ 0.15 մլգ/մ<sup>3</sup>,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկ՝ բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,

- Կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,

- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան հատկացնել 500.0 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Արագածոտնի մարզպետարանը, Թալին համայնքը, Մաստարա բնակավայրը:

Համաձայն տեղեկատվության հանքավայրի տարածքից դուրս, մոտ 100-120 մետր դեպի հյուսիս, ձորակի մյուս կողմում, Մաստարա-Գառնահովիտ ասֆալտապատ ճանապարհի աջ մասում առկա է 19-20-րդ դդ. փոքր գերեզմանոց, իսկ դրանից մի քանի մետր արևմուտք գտնվում է Ք.ա 2-1 հազ. թվագրվող դամբարանադաշտը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ուսումնասիրելով հաշվետվությունում ընդգրկված հնագիտական եզրակացությունը՝ հայտնել է իր համաձայնությունը՝ պայմանով, որ հանքավայրի արդյունահանման ընթացքում, հատկապես հողի վերին շերտը հեռացնելու ժամանակ պետք է ապահովել հնագիտական հսկողություն, ինչպես նաև հանքավայրը շահագործելու ժամանակ հայցվող տարածքից դուրս որևէ հողային աշխատանք չկատարել:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը ներկայացված դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Գնահատման և փորձաքննության ընթացքում, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), մոնիթորինգի արդյունքները, հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:
3. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քայուղեր, անվաղողի և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



4. Տարվա չոր ամիսներին պարբերաբար իրականացնել ջրցան՝ օրական 2-ից 3 անգամ՝ փոշու թույլատրելի նորմատիվային մակարդակն ապահովելու համար: Կիրառել փոշենստեցման փոշեճնշիչ սարքավորումներ, համաձայն՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» N15-Ն հրամանի:
5. Պահպանել նախագծով նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, բացառել հայցվող տարածքից դուրս որևէ հողային աշխատանքներ, քանի որ գործունեության հարակից տարածքներում առկա են հնագիտական շերտեր:
6. Բացահանքի նախապատրաստական աշխատանքների ընթացքում՝ (մասնավորապես՝ հողային), ապահովել հնագիտական հսկողություն՝ նախապես ԿԳՄՍ նախարարությանը տրամադրելով համապատասխան հնագետի տվյալները:
7. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, օրենսդրության պահանջներին համապատասխան, կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
8. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
9. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

**ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ**

«Աշ-Վա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Մաստարայի տուֆերի հանքավայրի «Աշ-Վա» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Շերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Արմինե Վարդանյան